Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑԻ № 1.

322
267
530
137-ՓԿ
8.
615.8
97443
667

ՄԵՆԴԵԼԵԱՆ ԿԱՄ ԲՈՒՖՈՆԱԿԱՆ

ՄԱԳՆԷՏԻՍՄ

ԹԱՐԳՄԱՆՍ ԳԱՐՄԱՆ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ.Ա. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՇՈՒՇԻ
Տպարան Բ. Տէր-Սահակեանցի
1901.

24 AUG 2013

4670

Дозволено Цензурою. Тифлисъ, 8 Мая 1901 г.

29 JUL 2010

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Բնական զօրութեան թանձրացումը՝ անտեսանելիի տեսանելի հետևանքը, հին հին դարերից ի վեր չը կարողանալով գտնել իր արդիւնքի ճշգրիտ բացադրութիւնը, անցել է նախապաշարումների և սնահաւատութիւնների կարգը։

Ասեղով գրելը, ջերմ կապելը, հատիկ, արճիճ թափելը և այլն, օկկուլտիք գիտութեան մեկ հասած թափթփանքները, այժմ լուրջ ուսումնասիրողի առաջ մերկացնում են իրանց գաղտնիքները ու բնական գիտութեան ամուր հիմքի վրայ կանգնում։—Աւելին ասենք. դրանք ներկայանում են մոռացած գիտութեան մէկ մէկ անհերքելի թէօրիաները։

Մարդկութիւնը ներմարդկային բնական զօրութիւնից շատ բան է սպասում և մեր դարը, առանց մարգարէ

լինելու գուշակում ենք, իր միակ խընդիրն է շինելու դրանով զբաղելու և նոյն իսկ դրանով կնքելու, և հեռու չէ այն օրը, երբ ամեն մի մայր օջաղի հետ միասին իր ձեռքը կը քցի և մագնիսահարի արհեստը՝ բուժելու իր ընտանիքի անդամներին առանց դեղ ու ճարի և բժիշկների կամայականութեան։

Տալով ընթերցող հասարակութեան Վիլլի Ռէյսելի այս գրքոյկի թարգմանութիւնը (Ռուսերէնից), խոստանում ենք մօտիկ ապագայում տալ նոյնպէս Հայ ժողովրդի մէջ գործածական՝ Նախապաշարումների և Սնահաւատութիւնների կարգն անցած, բուժական եղանակները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ մագնէտիսմի և մասամբ Հիպնոտիսմի բնական ու անհերքելի արդիւնք։

18-ն Ապրիլի 1901 թ.
Բալախանի։

Փ.

Տիսուբ, բայց, ցաւալով ասած, անհերքելի փաստ է, որ մարդկութիւնը աւելի և աւելի քայքայում է իր առողջութիւնը բազմաթիւ վնասակար ազդեցութիւնների պատճառով, ինչպէսին է մեծ քաղաքների կեանքը, գոյութեան միջոցների համար ծանր կռիւը և անխոհեմ զուարճութիւնները։ Ուստի զարմանալի չէ, որ չընայելով բժիշկների և հիւանդանոցների շատութեան, պաշտօնապէս ընդունուած և անընդունելի լեգէօն դեղերին, չընայելով ջրա-ելէքտրա-բաղնիքներին և ներկայումս գործածական բոլոր մնացած հիւանդատածութեան, դարձեալ հետզհետէ ում են բուժելու բոլորովին նոր եղանակներ և ջանքեր են նկատում վերականգնելու բժշկութեան

մագնէտիսմի միջոցով բուժելու փաստը ապացուցուում է կլասիք հեղինակներից բաղմաթիւ քաղուածքներով։ Այսպէս, օրինակ, Ստոբիուսի հրատարակած Սողոնի ընտիր հատուածների ժողովածուի մէջ կարդումենք՝ «մեծ տանջանքները յաճախ հետևանք էին աննշան ցաւի, և անօգուտ դիմում էին մեղմացուցիչ միջոցների. բայց եթէ չար ու ծանր հիւանդներից սաստիկ տանջւող մարդուն ձեռքերով շօշափելու լինիս, այն ժամանակ նա իսկոյն կառողջանայ»։

Մարցիալի մէջ գտնում ենք հետևեալ տեղը՝ «կինը (յատկապէս դրա համար որոշուած) ճարտարութիւնով տանում է մատները մարմնի վրայով և հմուտ ձեռքով սրսկում է բոլոր անդամները», և յետոյ Պլաւտիոսի մէջ՝ «միայն թէ ես ձեռքս նրա վրայով տանեմ, որ նա քնի»։ Արհեստական քնաշրջութիւն (սոմնամբուլիսմ) բերելը նոյնպէս յայտնի էր Ապուլէին և Աւրիլիոս Պրուդինցին ու

նկարագրուած է նրանց հեղինակութիւնների մէջ։

Էպիրացոց Պիրրոս թագաւորի և հռովմայեցիների Վեսպասիան ու Ադրիանոս կայսրների մասին յիշատակւում է, որպէս լաւ մագնիսահար-բուժողներ։ Թէոդոս մեծի յայտնի պալատական բժիշկը, նոյնպէս և փորձառական բժիշկ (էմպիրիք) Մարցելլը միատեսակ յիշատակւում են որպէս հմուտ մէսմէրիզօրներ։ Պոլինիոսը առաջարկում է՝ որպէս փորձով ապացուցուած բուժելու միջոց, մագնիսական շնչում ճակատի վրայ, իսկ Բէկոն Վէրուլամցին գրում է, թէ պարսիկ աղջիկների սովորութեան համաձայն, աղջիկները պէտք է չփէին Դաւիթ թագաւորին զմուռսով և ուրիշ հոտաւէտ նիւթերով, որպէս զի տային նրան կենսական նոր զօրութիւն։

Սուրբերի պատմութեան մէջ յաճախ են պատահում հրաշալի բժշկութիւններ ձեռք դնելով, դիպչելով հայլն։ Սուրբ

Բերնարը, Կոզման, Դամեանը, Պետրոս Ամենացին, Սուրբ Հովասափ թագաւորը կատարում էին հաղարաւոր այսպիսի մագնիսական բժշկութիւններ (Գեսիման, Օկուլտիքական բուժական եղանակներ)։

Նոյն իսկ Սուրբ գրքի մէջ կան շատ տեղեր, որ վկայում են ձեռք դնելով բժշկելու մասին։ Օրինակ, Պողոս առաքեալը Տիմոթէոսին ուղղած առաջին գրքի մէջ (4, 14) ասում է՝ «Անհոգ մի լինիր դէպի այն շնորհը, որ քո մէջ կայ և որը տուել է քեզ մարգարէութիւնով *երեցութեան ձեռնադրութեան միջոցով*»։ Գործք Առաքելոցի մէջ (28, 8) կարդում ենք՝ «Հայր Պուպլիան ջերմով և թանչով հիւանդացած պառկել էր. Պողոսը՝ մտնելով նրա մօտ, աղօթեց և *ձեռքը դնելով նրա վրայ բժշկեց*։

Ուրեմն մագնէտիսմը ինքն ըստ ինքեան ոչինչ նորութիւն չի ներկայացնում. բայց երկար ժամանակ այդ զո-

րութիւնը մնացել էր չը հետազօտուած, որովհետև նրա հոսանքը (էմանացիա) շատ քիչերին է տեսանելի, իսկ մարդիկ ընդհանրապէս տեսանելիին են հաւատում։ Մագնիսահարի հոսանքը կարող է տեսանելի լինել միայն մթութեան մէջ, այն էլ առանձին յատկութեան տէր մի քանի անհատների, օրինակ քնաշրջիկներին, կամ պարզատեսներին (ясновидящий)։ Մագնիսահարը զգում է իր մէջ այդ զօրութիւնը և իր ցանկութեան համեմատ, կարող է նրան ներգործել տալ ուրիշների վրայ բժշկելու մարմնական և հոգեկան հիւանդութիւններ։ Դարձեալ, նա կարող է մինչև անգամ մշակել մարդկանց մէջ, որոնք ունեն դէպի այդ մի առանձին ըմբռնողական կարողութիւն, քնաշրջութիւն կամ պարզատեսութիւն, ի նկատի առնելով, թէ կարող է արդեօք նշանակուած մարդկանց զօրութիւնը զարգանալ մագնիսահարի կամքով (սակայն միաժամանակ

մասնակցութեամբ, այն անձի կամքի, որի վրայ փորձ են անում)։ Ի հարկէ աւելի լաւ է եթէ մարդուս մէջ ծածկւած այդ զօրութիւնը երևան է գալիս ինքն իրան, առանց ուրիշի ներգործութեան. մագնէտիզմից օգտւում են միմիայն յայտնւած զօրութիւնը ուժեղացնելու ու ամրացնելու։ Մագնէտիսմը չի կարող հետազօտւել ոչ քիմիական և ոչ էլ բժշկական սովորական միջոցներով. նա ծածկւած է մարմնի մէջ. կապւած լինելով մի որոշ տեղի հետ՝ նա տարածւում է մարմնի բոլոր մասերի մէջ և ելեկտրական հոսանքի նման ձգտում է դէպի ձեռներն ու մատները։ Մի քանի անձնաւորութիւններ իրանց ձեռքերի մէջ զգում են այդպիսի հոսանք և՝ գիտակ չելինելով բացատրելու այդ զգացմունքը, կարծում են թէ գործ ունեն հիւանդոտ երևոյթների հետ։ Դա հնդուկ զօրութիւն է (ֆլիւիդ), բնածին մի քանի մարդկանց և իմանալի, որպէս

բնական զօրութիւն, միմիայն իր ներգործութեամբ։ Այդ ներգործութեան յատկութեան հետ մեզ ծանօթացնում են աչքի ընկնող շատ հեղինակութիւններ, որոնցից ցոյց կը տանք հետևեալ երկերը՝ պրոֆեսոր Էննեմոզերի «Գործնական ձեռնարկ մէսմէրիզմի», պրոֆ. Կիզերի «Ցելլուրիզմի եղանակը», դոկ. Գէորգ Բարդի «Կենդանական մագնէտիսմը», Դելէզի «Գործնական հրահանգ կենդանական մագնէտիսմի», պրոֆ. Կլիւգէի «Փորձ կենդանական մագնէտիսմի բացադրութեան»։

Նախ քան բուժական մագնէտիսմի մասին խօսելը պէտք է փարատել նախապաշարմունքների ամբողջ լեռը, որոնք այդ տեսակ մագնէտիսմի գոյութեան բացասութիւնն են առաջ բերում։ Դիմենք, այդ պատճառով, բժշկութեան պատմութեան ու այն շրջանին, որը մի դարի ընթացքում կրում է բուժա-մագնիտական, մէսմէրական անունը։ Դրան

վերաբերեալ հեղինակութիւնների մէջ մենք գտնում ենք, օրինակ, մագնէտիսմի գոյութեան ու բուժական զօրութեան մասին գիտական հետազօտութիւնների հետևեալ դատողութիւնները.

Պլինիոս. Կան մարդիկ, որոնց մարմինները ունեն բուժական զօրութիւն։

Յովհաննէս-Բապտիստ Վան-Հելմոնտ (1577—1644). Այժմ ամեն տեղ ծաղկող մագնէտիսմը բացի իր անունից չի պարունակում իր մէջ ոչինչ նորութիւն, ոչ էլ տարօրինակ կարծիք. իսկ եթէ այդպէս է երևում՝ այն էլ միայն նրանց որոնք ամեն բան ծաղրում են ու վերագրում են սատանային այն, ինչ որ իրանք չեն հասկանում։

Բժշկութեան դոկ. Փ. Ա. Մէսմէր (1741—1851). բնութեան բոլոր մարմիններից մարդուս վրայ ամենամեծ ազդեցութիւն ցոյց է տալիս մարդը. վերջինիս չի կարող փոխարինել ոչ մի շնչաւոր կամ անշունչ առարկայ։

Պրոֆեսոր դոկ. բժշկութեան Ի. Լիննեմոզեր (1787—1851), գործնական բժիշկ Միւնխենում, (սովորել է բժշկութիւնը Բերլինում). Մագնէտիսմը, ինչպէս ոչ մի ուրիշ միջոց, կտրում է ցաւը ու հանդստացնում ջղաձգութիւնները և այլն, շատ անգամ պահանջելով գործողութեան համար ոչ աւելի ժամանակ, քան ինչ որ պէտք է բժշկեն, սովորական կարգ ու սարքի մէջ, շնչերակ զընելու կամ դեղատոմս գրելու։ Նա, կարծես կախարդութիւնով, կենդանացնում է ուշաթափ դրութեան և ուժասպառութեան մէջ գտնուողներին, անց է կացնում բոբբոքումները, ոչնչացնում է ուռուցքները, առանց մի որ և է օժանդակող միջոցների բերում է քրտինք և ուրիշ կրիտիքական շարժումներ։ Բացի դրանից, մագնէտիսմը ունի չափից դուրս կարևոր նշանակութիւն և շնորհիւ դորան, որ շատ է պատահում, առանց ներվային համակարգութիւնը

գրգռելու ու թուլացնելու հետևանքի, նա հիւանդին թմրեցնում է, որ ներկայանում է ամենալաւ բուժական միջոց այն ամեն հիւանդութիւնների մէջ, որոնք առաջ են գալիս չափազանց յուզմունքներից ու անհանգստութիւնից, նոյնպէս և օրգանական դրութեան ներդաշնակութեան խանգարումից։ Տենդի, ամեն տեսակ ցաւերի, ջղաձգութիւնների և ներվային հիւանդութիւնների ժամանակ քունը ներկայանում է ամենալաւ միջոց բուժելու և ճգնաժամը դադարեցնելու, և ոչ մի ժամանակ այդ գործողութիւնը չի արտայայտւում աւելի չոշափելի կերպով, քան մագնէտիսմով առաջ բերած քնի ժամանակ։ Մագնէտիսմի շնորհիւ բժշկւում էին ամեն տեսակ հիւանդութիւններ, որոնց մէջ յաճախ անբուժելի յայտարարուածներն անգամ։ Բայց նա բժշկում է ոչ բոլոր հիւանդներին։ *Բուժական յայտնի եղանակներից ոչ մէկը կարող չէ հա-*

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մեմատել մագնէտիսմի հետ, թէ հիւանդութիւնների ծաւալի եւ թէ գործողութեան վերաբերմամբ. իւրաքանչիւր գործնական-մագնիսահար պատրաստ է ապացուցանելու այս, երկիւղ չը կրելով խայտառակւելուց։

1002
9743

Դոկ. բժշկութեան Կարլոս Գուստաւ Կարուս, պրոֆ. Դրէզդենում, Սաքսոնիայի թագաւորի պալատական բժիշկը. Ամենից առաջ, ինչ վերաբերւում է հիւանդութիւնների կերպարանքին, որոնց համար միշտ աւելի պիտանի է համարւել գործադրել մէսմէրիսմը, հեշտ է հասկանալ, որ առաւելապէս ենթարկւում էին բժշկութեան այդ եղանակին այն հիւանդութիւնները, որ հետևանք են յատկապէս գրգռման շատութեան, նոյնպէս էլ, այսպէս ասած, ներվային հիւանդութիւնների ամբողջ մասսան, ջղաձգութիւնները, հիստերիան, ախոնդանոտութիւնը (հիպոխոնդրիա), տեղական ցաւերը, կաթւածը և զգայարանա-

կան գործարանների ցաւերը։ Դարձեալ դիւրութիւն է ձեռք բերել և կը բերի այն հիւանդութիւնների մէջ, որ կապ ունեն սերական զարգացողութեան հետ, մանաւանդ աղջիկների ուսումնարանական հասակում, ինչպէս գունատութեան, դաշտանի խանգարման և այլն և այլն։

Դոկ. բժշկութեան Կարլոս-Աղոլֆ Փոն-Էշենմայեր, պրոֆ. Տիւբինգենում (1768—1852). Կենդանական մագնէտիսմը շրջապատուած է հրաշալիքի լուսապսակով։ Նրա տարօրինակ երևոյթների մասին առաջին անգամ լսողը շատ հեշտ կարող է մտածել, թէ վերադարձել են այն ժամանակները, երբ բժշկականութեան մէջ ներս շպրտուեց ծածկագիտութիւնը իր հետևորդների ուղեկցութեամբ, որոնք են՝ մեռելահարցութիւնը, դիւոտութիւնը, վհուկների և ոգիների պատմութիւնը, բոզինկրէյցերների կարեկցական և մոգական հրաշագործ բժշկութիւնները։ Բայց այնուա-

մենայնիւ անիրաւացի կը լինէր այսպէս մտածելը, որովհետև մեր դարը զգաստութիւն և լրջութիւն է մտցնում խորհրդաւորութեան շրջանի մէջ և՝ ամենայն դէպքում, այն ուսումնականները, որ կենդանական մագնէտիսմի գլուխ են կանգնած, չեն կարող մեղադրուել միստիքականութեան մէջ։

Դոկ. բժշկութեան Պասսաան, բըժիշկ Ֆրանկֆուրտ Մայնի վրայում («Քննութիւն կենդանական մագնէտիսմի մասին»). Փաստերը (կենդանական մագնէտիսմը ապացուցանող) ակնյայտնի են և չեն էլ հոգում այն մասին, թէ յարմարւում են արդեօք նրանք մարդկային փոքրիկ ուղեղի վերացականութեան, կաղմութեան ու աշխարհային դրութեան։ Այժմ այդ փաստերի թիւը քիչ չէ, բայց միմիայն նրանց համար, որոնք աշխատում են ծանօթանալ դրանց հետ, որը կենդանական մագնէտիսմի մասին դատողներից շատերը չեն անում։

Մարդուս յատուկ մի քանի անսովոր զօրութիւններ կարող են, սակայն, այնքան քիչ ուսումնասիրուած լինել, ինչպէս և հէնց իրանք անսովոր անձնաւորութիւնները։ Մանաւանդ որ, Պղատոնը և Կեպլերը եղել են, թէև մեզ չեն հանդիպում ամեն օր նրանց հոգու հաւասար մարդիկ։

Շոպենհաուէր. Նրան, ով այժմ մերժում է մագնէտիսմի ներգործութիւնը, արժէ համարել ոչ թէ չհաւատացող, այլ տգէտ։

Դոկ. բժշկութեան Է. Ա. Լիտցէ, Սանիտարական խորհրդական Կեսէնում. Ես շատ անգամ առիթ եմ ունեցել աշխատելու կենդանական մագնէտիսմի շրջանում ու քննելու նշանաւոր երևոյթները։ Դա աստուածային տուրք է, որը կարելի է ուսումնասիրել, բայց ոչ հասկանալ, որը, սակայն, ինչպէս այդ մասին փաստերը վկայում են, կայ և գտնւում է հաւատի և կամքի մէջ։—

Կենդանական մագնէտիսմի երևոյթներին պատկանում է և այն, որ կարելի է նրան տեղափոխել առարկաների մէջ, օրինակ, մաքուր ջրի մէջ և այլն։

Դոկ. բժշկութեան Գուստաւ Եգերը, պրոֆ. Շտուտգարդում. Ամեն ժամանակներում եղել են մարդիկ, որոնց վերագրել են, այսպէս ասած, մագնիսական բուժական զօրութիւն։ Միայն ամենամեծ սահմանափակութիւնը և տգիտութիւնը կարող են ամենալաւ կերպով հաստատուած փաստերը խաբեբայութիւն համարել և դրանով կատարեալ յարգանքի արժանացած շատ մարդկանց հաշւել խաբեբաների կամ խաբուածների կարգին։

Դոկ. բժշկութեան Լաման. Պարբերական բնաւորութիւն ստացած խկական ներքին ցաւերի միջոցին յատուկ միայն մէկ միջոց է պէտք գալիս, որին, ինչպէս երևում է, մեր ժամանակը ձգտում է կարևոր նշանակութիւն

տալու,—դա մագնէտիսմն է։ Բայց մագնէտիսմի ներգործութիւնը անհերքելի է դառնում, երբ թեթև շփումով, այսինքն մագնէտիսմով, բժշկւում են յոգերի հնացած խեղումները (միայն եթէ նրանք մեքենայական արգելքներ չեն ունենում), յոգացաւերը և այլն, որոնք չեն ենթարկւում ոչ էլեքտրականութեան, ոչ մասսաժի, ոչ բժշկութեան ամենակարելի գործողութեան։

Դոկ. բժշկութեան Գ. Փոն-Լանգսդորֆ. Ամեն մարդ աւել կամ պակաս ունի մի նուրբ, միայն մի քանի քնաշրջիկներին տեսանելի թաղանթ (որ կոչւում է ներւային աուր, լոկ թաղանթ, պերիսպրիտ, հոգեկան հոսանք), որ նրման է էլեքտրականութեան և մագնիսականութեան բնական զօրութիւններին, բայց չափից դուրս նուրբ է նրանցից և այդ պատճառով էլ աւելի ընդունակ է թափանցելու մարմինների մէջ։ Այդ բնական զօրութիւնը, որ կարելի

է հաղորդել ձեռք դնելով կամ հիւանդ տեղը շփելով, յայտնի էր հին ազգերին, որը կարելի է հաստատել Հին Կտակարանի՝ մեր հնագոյն պատմական աւանդութիւնների շատ օրինակներովը։

Դոկ. Կարլոս Բրանդտ. Կենդանական մագնէտիսմն էլ կարելի է գործածել շատ հիւանդների վրայ և, ըստ մեծի մասին, շատ մեծ օգուտ է տալիս։

Պրոֆեսոր դոկ. Փոն-Նուսբաում. Միւնխէն 12 մայիսի 1890 թ.։ Խօսքս նրա մասին է, արդեօք կարելի է ձեռք դնելով կամ շփելով մագնիսական զօրութիւն առաջ բերել և արդեօք կարող է ջուրը մագնիսահարի դիպչելովը առանձին զօրութիւն ստանայ, կամ թէ այս և թէ միւսը խաբեբայութիւններ չեն։ Այս երկու հարցերը հանգում են մէկի՝ արդեօք գոյութիւն ունի ընդհանրապէս մագնէտիսմը, որի յատկանիշն է հրաշագործ զօրութիւն։ Ցիշելով երդ-

մանս պարտքը՝ պէտք է երևան բերեմ հետևեալ դրութիւնները.

1) Կենդանական մագնէտիսմը, որ մեծ զօրութիւն ունի, այնպէս որ արդէն ձեռքը կպցնելով կամ ջուրը մագնիսացնելով շատ բանի է հասնում, գոյութիւն ունի անկասկած։

2) Կենդանական մագնէտիսմը մինչև այժմ ուսումնասիրել են միայն գիտական կրթութիւն ստացած քիչ անձեր, դրա համար էլ դեռ շատ քիչ ենք ծանօթ նրա զօրութեան հետ. նրանից օգտւում էին համարեա՝ բացառաբար միայն տգէտները մոգական ներկայացումների համար՝ փող դցելու նպատակով։

3) Այդ պատճառով, դատաստանական բժշկութեան տեսակէտից, ամեն մի դատողութիւն կարող է արտայայտւած լինել միմիայն մեծ զգուշութեամբ։

Թոյլ եմ տալիս ինձ մի փոքր կանգ առնել այս երեք դրութիւնների վրայ։

1) Ոչ ոք չի կարող ինքն իրան մահու չափ գրգռել կամ ընդհանրապէս ուժեղ գրգռել։ Կան մարդիկ, որոնք միմիեանց վրայ հանդարդեցուցիչ ազդեցութիւն են գործում և այնպիսիներն էլ կան, որ հակադիր ազդեցութիւն են գործում։ Փոքրիկ երեխաները ամենքի ձեռքի վրայ միատեսակ հեշտութեամբ չեն քնում։ Ես գիտեմ բարեկիրթ տիկիններ, որոնք բոլորովին չեն կարողանում սանրւել սևաթոյր (брюнетка) աղախիններից, որովհետև նրանց մազերը վերջիններիս մատների հետ դառնում են ու վեր ցցւում, մինչդեռ հեշտ կերպով ողորկւում են խարտեաշների (блондинка) մատների տակ։—Այստեսակ յարաբերութիւններ շատ կան։ Բայց մինչև այժմ դեռ ևս չի որոշւել՝ թէ ինչպէս և երբ նրանք կարող են գործադրւել հիւանդների օգտին։

2) Գիտական կրթութեան տէր բժիշկները դեռ ևս քիչ են պարապւել

մագնէտիսմով, աւելի յարմար գտնելով նրան խաբեբայութիւն համարել։ Բայց ճշմարտութիւնը միշտ իր ճանապարհը բացում է և, թէև այդ հրաշագործ զօրութիւնները դեռ ևս գտնւում են անկոչների ձեռքում, բայց շուտով այլ ևս անկարելի կլինի նրանց չըկամենալ ճանաչել։ Բժիշկները բռնւած են եսական վախով՝ կորցնելու իրանց բարի անունը ու շարլատան համարւելու։

3) Որովհետև դեռ ևս ոչ մի համալսարանում դասախօսութիւններ չեն կարդացւում մագնէտիսմի մասին, ուստի նրան ուսումնասիրելու քիչ դէպք է պատահում։ Այդ պատճառով դատաստանական բժիշկները շատ զգոյշ են իրանց եզրակացութիւնների մէջ։ Մեծ մասը կարելի է համարում, որ մենք ունենանք կենդանական մագնէտիսմի մէջ մեծ զօրութիւն, որը, անկասկած, ժամանակի ընթացքում կը դառնայ բուժական ազդեցիկ միջոց, բայց առայժմ

դեռ ևս քիչ է յայտնի, որովհետև ամեն ոք պէտք է յենւի համարեա բացառապէս իր սեփական փորձերի փոքրիկ պաշարի վրայ։

Ներկայումս, ինձ թւում է, խնդիրը գտնւում է այն դրութեան մէջ, որ չի կարելի տգիտութեան մէջ մեղադրել նրանց, որոնք չեն հաւատում մագնէտիսմի մասին պատմւած հրաշքները, բայց, միւս կողմից, չի կարելի նոյնպէս հանդիմանել չափազանցութեան և շարլատանութեան մէջ նրանց հակառակորդներին, որ վերագրում են մագնէտիսմին մինչև այժմ դեռ ևս անյայտ զօրութիւններ։

Վերջապէս այժմ դիմենք դարձեալ մէկ բժշկի, որից արդի գիտութիւնը մօտիկ ապագայում շատ բաներ ունի սովորելու։ Դա Պարացելսն է, որը իր «De origine morborum invisibilium» գրքի մէջ Մէսմէրից շատ առաջ մանրամասն բացադրութիւններ է տւել մէսմէրիսմի

մասին։ Անշուշտ քիչ բժիշկներ հակամէտ կը լինեն մերժելու Պարացելսի հեղինակութիւնը. բայց աւելի մօտիկ ուսումնասիրելով երևում է, որ բժիշկներից ոչ ոք չի կարդացել նրա հեղինակութիւնները։ Բացի դրանից բժշկութեան նորագոյն պատմութիւնը իմանում է Գերմանիայում հաբիւրաւոր բժիշկների անուններ, որոնք հրապարակաւ կամ ընտանեկան շրջաններում պաշտպանում են մագնէտիսմը (դեռ չենք ասում արտասահմանում մագնէտիսմի օգտին եղած շարժումը, որ աւելի առաջ է գնացել)։

Ուրեմն վերոյիշեալ հեղինակութիւն ունեցող անձերը՝ ճշմարիտ գիտութեան ներկայացուցիչները, հաստատում են բուժական մագնէտիսմի գոյութիւնը։

Այժմ դառնանք մեր սեփական փորձերին։ Ամեն մարդ մայր ունի, և համարեա ամեն մի մայր իր կեանքում թէկուզ մի անգամ նստել է հիւանդ երե-

խայի անկողնի մօտ։ Որքան յաճախ դրել է նա ձեռքը տենդից այրուող գլխի վրայ, երեխան աւելի հանգստացել է ու կուշտ քնել։ Որքան յաճախ մայրը բռնել է իր դաւակի ձեռքը, նա չի կարողացել քնել և անմիջապէս ձեռքը թողնելուց յետոյ բորբոքւած աչքերը փակել են զովարար քնով։ Փորձառու բժշկին շատ լաւ յայտնի է, որ մայրը իրանից լաւ կարող է օգնել։ Ի՞նչն է տալիս երեխային հանգստութիւն։ Պարզ է, որ ձեռքը չէ տալիս։ Այս գործողութիւնը նոյնպէս չի կարելի վերագրել ներշնչումներին, որովհետև սրանք տենդային դրութեան միջոցին համարեա ոյժ չունեն։ Գուցէ դա մայրական սէրն է։ Ես համարեա հաւատում եմ դրան. բայց՝ արդի տիրապետող գիտութեան համաձայն, սէրը միմիայն հասկացողութիւն է։ Իմ հասկացողութեամբ, սէրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի զօրութիւն՝ օժտւած չափազանց նուրբ, տիեզերքը

թափանցող, նիւթով իր ընտրած կէտի վրայ ներգործելու և վերանորոգելու նրա մէջ ծագման կէտի հետ ունեցած հաւասարակշռութիւնները։ Քննենք այս երևոյթը ֆիզիքական տեսակէտից։ Մենք ունենք զօրութեան կենդրոն մարդուս հոգու մէջ՝ ենթակայ մշտական տատանման։ Այս տատանումները թափանցում են բոլոր մարմինը, եթերային մարմինը, որ ընկած է կարծրանիւթի հիմքում։ Նիւթի այդ թափանցականութեան պատճառով մարմինը, ինչպէս ասում են, կենդանի է, այսինքն սկսում է շարժուել այդ տատանման թելադրութեան տակ։ Այսպիսով մարդս ներկայանում է միակ ներփակուած անհատ (1., հոգի, զօրութեան կենդրոն, 2., տատանումներ, կենսական զօրութիւն, 3., նիւթ, մարմին)։

Յետոյ, եթէ վերոյիշեալ տատանումները կարողանում են անարգել բոլոր ուղղութիւններով՝ համաձայն իրանց

ծագման կէտին, սկսել ու տեղ հասնել, այն ժամանակ մարմինը առողջ է. իսկ եթէ տատանումները արգելքի են հանդիպում այն ժամանակ այդ տատանումները ձգտում են առաջ բերում հեռացնելու արգելքները։ Արգելքի հանդիպելու այդ երևոյթները և նրանց դէմ եղած մրցումները անւանում են հիւանդութիւն և առողջացում։ Դրանից հետևում է, որ ամեն մի մարդու հոգի, շնորհիւ աստուածային զօրութեան ներկայութեան, պէտք է բաւականին զօրեղ լինի նիւթի վրայ տիրելու համար։ Բայց, դժբաղդաբար, դաստիարակութիւնը և նախապաշարմունքները ամեն կերպով օժտել են թուլացնելու և ոչնչացնելու հոգու այդ ինքնուրոյն զօրութիւնը, իսկ արդի կուլտուրական մարդու կեանքի եղանակը ստեղծում է այդ թուլացած զօրութեան համար՝ օտար տարրերի կուտակումով, անյաղթելի արգելքներ։ Այս դէպքում մարդս այլ

ևս չի կարող իր սեփական զօրութիւնով (կենսական զօրութիւնով, տատանումների ուժգնութեամբ) հեռացնել այդ արգելքները, ուստի, այդ տեսակ հիւանդութիւնների դէպքում, զօրութեան մի ուրիշ կենդրոն (հոգի), որ ունի աւելորդ տատանման ուժգնութիւն (ամուր, չը քայքայւած առողջութեան պատճառով), պէտք է հաղորդի այդ աւելորդը աւելի պակաս ուժեղին՝ փոխադրելով ուղիղ հոգու մէջ, կամ թէ մարմնի հիւանդ մասի վրայ (մագնիսահար)։ Այստեղ մեզ համար հետաքրքիր է այս վերջին եղանակը։ Ենթադրենք հիւանդի գլխի մէջ կենսական զօրութեան տատանումները մի որ և է մկանունքի կրճատումով կանգնեցրւած են և չեն կարողանում նրա միջոցով ներս թափանցել ու տեղ հասնել (գլխացաւ). նրա սեփական կենսական զօրութիւնը չափից դուրս թոյլ է։ Մագնիսահարը օգնութեան է հասնում իր միջոցներով։

Ընորհիւ իր առողջ մարմնի մէջ տարածւած տատանումներին նա, առաջին, զօրութեան հոսանքով ամրացնում է հիւանդի թոյլ տատանումները, իսկ երկրորդ, ձգում է դէպի իր մարմինը ցաւաբեր պատճառը (անկանոն տատանումները հիւանդի մարմնի մէջ), որպէս զի մղի նրան տարածութեան մէջ, ինչպէս մղում են կաշու մեռած մասնիկները։ Այս ազատւած ցաւաբեր պատճառը մինչև իր ոչնչանալը անցնում է էլի զանազան շրջաններ. բայց դա արդէն այստեղին չի վերաբերում։

Ուրեմն մեր ցոյց տւած զօրութիւնը՝ դուրս եկած առողջ մարմնից, կարելի է փոխադրել հիւանդների վրայ և այս կամ ուրիշ եղանակով նրանց վրայ բուժական գործողութիւններ կատարել։ Փնտռենք անհերքելի ապացոյցներ, որ ցոյց տան թէ այդ տեսակ զօրութիւնը կամ, ճիշտն ասած, նիւթը, զօրութեան առանձին ուղղութիւնով, թա-

փանցում է մարմնի մէջ ու դուրս է գալիս նրանից։ Գիտութիւնը այդ հաստատել է բազմաթիւ համոզեցուցիչ փորձերով. օկկուլտիզմը (մի գիտութիւն, որ իսկապէս այդ կոչման արժանի է) արդէն մի քանի հարիւր տարուայ ընթացքում ճիշտ ու ամենակրկիտ մանրամասնութիւնով յայտարարել է այդ խնդիրների մասին։ Բայց, տգիտութեան մէջ անհեթեթ անբաստանելուց խոյս տալու համար, որ սպասում է մեզ, եթէ կսկսենք բերել մեր ժամանակին չըպատկանող մարդկանց կարծիքը, դառնանք հէնց ժամանակակից, այս շրջանի մէջ գիտնական հետազօտողին և ծանօթանանք այն բանի հետ, որ նա գտել է հասարակ փորձերի ու լուսանկարի օգնութեամբ։ Խօսքս մօտերքս Պարիզում յայտնի դարձած դոկ. Բարադիւկի մասին է, որը իր նորագոյն հետազօտութիւնների արդիւնքը ամփոփել է „L'âme humaine“ հետաքրքիր գրքի մէջ։ Դժբաղ-

դաբար տեղը թոյլ չի տալիս մեզ մանրամասնօրէն պարապելու այդ գնահատելի գրքի բովանդակութիւնով։ Բարադիւկը շինել է, այսպէս ասած, կենսաչափ (բիոմէտրը), որի գլխաւոր մասը ներկայանում է առանցքի վրայ հեշտ պտտուող մի ասեղ։ Երբ մօտեցնում ենք աջ ձեռներս ասեղին՝ սուր ծայրը ձգդում է, երբ մօտեցնում ենք ձախը՝ ասեղը հրւում է։ Դոկ. Բարադիւկ սրանից եզրակացնում է, որ աջ ձեռքով մարմնի մէջ ներս է մտնում կամ ներլցցում հեղուկ (ֆլիւիդ) հոսանքը և որ ձախ ձեռքով միևնոյն հոսանքը մարմնից դուրս է գալիս։ Այսպիսով Բարադիւկը տալիս է՝ մարմինը թափանցող և նրա անդամների վրայ ներգործող հոսող նիւթի գոյութեան փորձնական ապացոյցը։ Սա առաջին քայլն է։ Երկրորդ քայլը կայանում է Բարադիւկի ձեռքով այդ հեղուկը լուսանկարելուն մէջ, մի կողմից չնորհիւ հոսանքի՝ թի-

թեղի վրայ արած ներգործութեան, միւս կողմից՝ ձեռքը իր հոսանքով միասին լուսանկարելուն մէջ (Պետերբուրգում պրոֆ. Նարկևիչ Իորկի եղանակով)։ Մենք տեսնում ենք մօտաւորապէս ձեռքի ձևը, որի կակուղ մասերից ու մատներից դուրս են գալիս պարզ լուսեղէն փունջեր։ Ուրեմն մենք ունենք նիւթի՝ ձեռքից հոսելու տեսական ապացոյցը։ Որ այդ նիւթը կենսական զօրութեան տատանումների կրողն է՝ դրան ապացուցանելու հարկ չկայ, որովհետև այդ տատանումների ուրիշ կրող գոյութիւն չունի, և սա ճշդութեամբ հաստատուած է բազմաթիւ հետազօտութիւններով (Բարադիւկ, Ռէյխենբախ)։ Առանձնապէս մեծ թւով ապացոյցներ են պարունակւում բարոն Ֆոն-Ռէյխենբախի դեռ ևս քիչ յայտնի „Der sensitive Mensch“ գրքի, նոյնպէս և բարոն Կարլոս դիւ,Պրելի նշանաւոր հեղինակութիւնների մէջ։ Ընդհանրապէս, մեր

խնդրով ամեն մի լուրջ պարապող իր անձնական դիտողութիւններից այն եզրակացութեան կը գայ, որ մարդուս մարմնի մէջ գոյութիւն ունի բուժարար հեղուկ զօրութիւնը։ Եթէ բոլոր մարդիկ լինէին պարզատես, այն ժամանակ լուսանկարչական թիթեղը աւելորդ կը լինէր. հոսանքը և դեռ շատ հետաքրքիր բաներ կը տեսնուէին հասարակ աչքով։ Բայց առայժմ և վերոյիշեալն էլ բաւական է ամեն մարդու համոզելու բուժական մագնէտիսմի գոյութեան մասին, որ ուսումնասիրւած է աչքի ընկնող գիտնականներից և ապացուցած փորձերով։

Կենդանական մագնիտիսմի բուժարար զօրութեան որպէս վերջին ապացոյց, մատնացոյց ենք անում հաղարաւոր հիւանդների վկայութեան վրայ, որոնք մագնիսահարների ձեռքով (ոչ հիպնոսահարների, ներշնչողների) ազատուել են ծանր տանջանքներից։

Վերջերքս մագնէտիսմը, լուրջ հիւանդութիւնները շուտով բժշկելու պատճառով, ձեռք է բերում աւելի ու աւելի հետևողներ, իսկ Ֆրանսիայում մագնէտիսմի դպրոցը հաւասարեցրած է ուսումնարանական ուրիշ բարձրագոյն հաստատութիւնների հետ։ Իսկ և իսկ „Journal du magnetisme" ի 1895 թ. մարտի գրքի մէջ տպագրուած է հետևեալ կարևոր լուրը. «Ժողովրդական լուսաւորութեան և բժշկական համալսարանի գլխաւոր խորհրդի միաձայն համաձայնութեամբ մագնէտիսմի դպրոցը (կենդանական մագնէտիսմի—*հը շփոթել հիպնոտիսմի հետ*) նորերս հաւասարեցրած է բարձրագոյն դպրոցական հաստատութիւնների կարգին»։

Այս կարգադրութիւնը լաւ հասկացնելու համար աւելացնենք, որ Ֆրանսիայում կէս դար կայ, որ մագնէտիսմը գիտականօրէն ուսումնասիրւում է և դրանով բժշկելու եղանակը նշանաւոր

հետևանքների է հասել։ Կուսակիցների մեծ թիւը համախմբւում են զանազան մասնագիտական օրգանների շուրջը ու ձգտում են գիտականօրէն հաստատել կենդանական մագնէտիսմի երևոյթները։ Կան շատ շրջաններ, որոնք իրանց համար խնդիր են չինել հետազօտել մագնիսական տարօրինակ երևոյթները, տարածել ժողովրդի մէջ տեղեկութիւններ այդ երևոյթների մասին և գործակցել ընդունել տալու մագնէտիսմով բժշկելու ազատ իրաւունքը։ Ժողովներ են գումարւում, հանդանակութիւններ են լինում՝ մասամբ պրոպագանդայի համար միջոցներ ձեռք բերելու, մասամբ ևս կառուցանելու մշտական դպրոցներ, նոյնպէս և ընթերցանութիւններ այդ ուղղութեան օգտին։ Այսպիսով կենդանական մագնէտիսմի հետևողների միջազգային ժողովը (ինչպէս ասել է „La chaine magnétique" ամսագրի 17-րդ տարւայ յաւելուածի մէջ) դիմեց Ֆրան-

սիացող պատգամաւորների պալատին բազմաստորագիր խնդրագրով՝ պահանջելով չը զրկել բազմաչարչար մարդկութիւնը մագնիսական բուժումից և թոյլ տալ մագնիսահարներին միւս բժիշկների նման պարապելու ազատ պրակտիկայով։ Ահա այստեղին վերաբերեալ խնդրագրի կտորը. «Ցանկալի է օրէնսդրական ժողովը բժշկական կանոնադրութեան բնագրի մէջ մտցնի հետևեալ յօդուածը՝ մագնիսական գործողութիւնն ու մասսաժը, որպէս բացառապէս ձեռքի միջոցով բժշկութիւն, մնում են բժշկութեան բնական մեթոդի շրջանում, ինչպէս լողանալը, օդը և լոյսը։ Համապատասխանող օրէնքները չեն դիպչիլ այս նշանակուած եղանակով բուժող անձանց, քանի նրանք չեն դուրս գալ գծուած սահմանից»։

Հասարակութեան կարծիքը այս խնդրագրի կողմն էր, այնպէս որ ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւնը և Պարիզի բժշկական ֆակուլտէտը ստիպուեցին ընդունել նոր ուղղութիւնն ու հասարակաց ցանկութիւնը և պաշտօնապէս ճանաչել մասնաւոր մարդկանց մագնէտիսմը ուսումնասիրելու համար հիմնած դպրոցները՝ հաւասար իրաւունքի վրայ դնելով նրանց միւս արհեստագիտական դպրոցների և համալսարանների հետ։ Այսպիսով կենդանական մագնէտիսմը լոյսի, տաքութեան և էլեքտրականութեան հետ համահաւասար իրաւունք ստացաւ կանգնելու ամուր, գիտական հետազօտութեան վրայ հիմնուած հողի վրայ, և կարող է խաղաղ նայել ապագայի վրայ։

Գերմանիայում մագնիսահարները կախարդների հետ միասին դեռ ևս նստում են միևնոյն սեղանի վրայ ու դատի ենթարկւում։ Դեռ շատ կանցնի որ այնտեղ էլ կենդանական մագնէտիսմի համար ամբիոն կը հաստատուի։ Թէև մեր դարի սկզբում Բերլինում կար պրոֆ.

Վոլֆերդից հիմնուած մագնիսական Կլինիկա և Կիզեր, Էշենմայէր ու Նասսէ պրոֆեսորների 1817 մինչև 1823 թ. հրատարակած «Կենդանական մագնէտիսմի արխիւի» տասներկու հատորների թերթողը կարող է համոզել, որ այն ժամանակ մեծ թւով բժիշկներ գործադրում էին մէսմէրի բուժելու եղանակը, բայց, ի վնաս տանջւող մարդկութեան, այդ եղանակը աչքի թողի արւեց, երբ բժշկութեան մէջ գերակշռեց նիւթապաշտական ուղղութիւնը, որին մինչև այժմ էլ հետևում է։ Հետևաբար պրոֆ. Նուսսբաումի այն խօսքը, թէ գիտական կրթութեան տէր բժիշկները չեն ուսումնասիրում մագնէտիսմը, վերաբերում է միայն ներկայիս և ոչ անցեալին։

Դոկ. Ֆոն-Զարուկրատը ուղարկել է մեզ հետևեալ կոչը, որը դնում ենք այստեղ. «Անձամբ ենթարկւած լինելով մագնիսական բժշկութեան, այն համոզ-

մունքին եմ եկել, որ՝ ձեռքի ափը մարմնի զանազան մասերի վրայ դնելով, մագնիսահարը ցոյց է տալիս հիւանդի վրայ չափից դուրս բարերար ազդեցութիւն, որը շատ յաջող կերպով կարելի է համեմատել ներկային դրութիւնը ամրացնող հոսանքի հետ։ Մագնիսահարի ափի տակ ես իսկոյն ինձ վրայ զգում էի տաքութեան աւելացում, որը արագ տարածւում էր դէպի ամեն կողմ, անկախ նրանից, թէ դրւում է արդեօք ձեռքը մէջքիս վրայ, ողնաշարիս ուղղութիւնով, կամ կրծոսկրիս վրայ, կամ թէ սրտիս կողքերին։ Մագնիսական բժշկութեան անընդմիջական ազդեցութիւնը ամեն անգամ կայանում էր նրանում, որ զգում էի իսկապէս տաքութեան, ամրապնդութեան և առողջութեան զգացմունք՝ դիւրեկան հրճւանքով կրկնւող շատ խոր ներշնչման հետ միասին։ Այն ամենը, ինչ որ ես կարողացել եմ մինչև այժմ դիտել կենդանա-

կան մագնէտիսմի ազդեցութեան վերաբերեալ և յատկապէս, զանազան հիւանդութիւնների շուտափոյթ բժշկելու աշկարա դէպքերը հարկադրում են ինձ ցանկալ, որ նա ուսումնասիրի ընդհանուր առմամբ և մանրամասնաբար և և որքան կարելի է հիւանդանոցներում ընդարձակ գործածութեան մէջ մտնի,— մի ցանկութիւն, որ գտել է իր հիմքը և արդարացումը վաղուց անցած տասնամեակների, ինչպէս և մեր ժամանակի գործնականութեան մէջ»։

Արդէն Մէսմէրի կենսագրութիւնը ծառայում է որպէս ապացոյց այն նշանաւոր արգելքների, որ դրուեց բժիշկների կողմից կենդանական մագնէտիսմով բժշկելու եղանակի դէմ։ Պարիզում գործելու միջոցին նա ոչ միայն ծաղրի առարկայ էր, այլ և նախանձի ու հալածանքի։ Թագաւորի հրամանով նշանակուեց երկու մասնաժողով, որը, սակայն, իրան պարտական չը համարեց

ուսումնասիրել մագնէտիսմը Մէսմէրի մօտ և ի հարկէ հասաւ բացասական հետևանքի։ Մէկ հանգամանքում մասնաժողովը իրաւունք ունէր՝ նրա փորձը, հասկանալի է, մագնէտիսմի մասին եղած ասէկոսէներից աւելի բան չը հաստատեց։ Պարզ բան է. քննիչ մասնաժողովը, ինչպէս որ էլ լինէր նրա կազմը, մտցնելով *այդպիսի բարոյական անտրամաղրութիւն եւ նախապաշարմունք* այն շրջանի մէջ, ուր *հոգեկան ազդակն* է դեր խաղում, չէր կարող հասնել մի որոշեալ հետևանքի։

Մագնէտիսմն ու քնաշրջութիւնը քննելու համար, երբ 1825 թ. Պարիզի համալսարանը կրկին մասնաժողով կազմեց, նախանձն ու արհամարհանքը մի փոքր թուլացել էին։ Մասնաժողովին մասնակցում էին մագնէտիսմի հետևողներից, հակառակորդներից և անտարբեր մարդիկ։ Ինչպէս յայտնի է, այդ մասնաժողովը՝ հինգ տարուայ աշխատու-

թիւնից յետոյ միայն, ընդունեց այն ամենը, ինչոր մերժուած էր Մէսմէրի ժամանակ, մինչև անգամ քնաշրջիկների բոլոր նշանաւոր յատկութիւնները։ (foissac, Rapports et discussions de l'Académie royale de médecine sur le magnétisme animal.): Այնուամենայնիւ այս մասնաժողովի յաջողութիւնը նոյնպէս փայլուն չէր։ Ճշմարիտ է, նրա հաշուետուութեան մէջ բերուած են բաւականին փաստեր, բայց ամեն մի մագնիսահար՝ շրջապատուած բարեհաճ հանդիսատեսներով, կարող է աւելի նշանաւոր հետևանքների հասնել։

«Մտքերի ներկայ տրամադրութեան տակ Գերմանիայում քննիչ մասնաժողովը ոչ մի բանի չէր հասնիլ։ Այնտեղ թէև հրաւիրուեն էլ հեղինակաւոր գիտնականներ, որոնք իրանց մասնագիտութեան մէջ թէև շատ բան կարող էին անել, բայց մագնէտիսմի և քնաշրջութեան մասին հասկացողութիւն չունեն»։ (Du Prel, „Sphinx" XVII):

Արդէն Ա. Դ. Դէլիսը իր «Մոգական գաւազանի» մէջ (Լէպցիկ, Մուտցէ, 1874), 33 գլխում շատ հետաքրքիր նկարագրութիւն է անում, թէ ինչպէս մագնիսական քնի մէջ գտնուելու տրամադիր բոլոր առարկաները շրջապատուած են փայլուն մագնիսական հոսանքով։ Ինչ վերաբերում է իսկական գիտութիւններին, որոնց համար քնաշրջութիւնն ու պարզատեսութիւնը դեռ ևս գոյութիւն չունեն, այդ գիտութիւններն էլ պէտք է խոնարհուեն լուսանկարչական փռած թիթեղի առջև։ Թէև բոլոր նշանաւոր մագնիսահարները, ինչպէս Մէսմէր, Դէլէզ, Տարդի, Լաֆոնտէն, Դալոզ, Ռէյխենբախ և ուրիշները, լսել են իրանց՝ մագնիսական գործողութեան ենթարկած անձերից միևնոյնը, այսինքն՝ թէ նրանց ձեռքերից ու գլխից դուրս է գալիս մի պարզ բոց, բայց դժբաղդաբար այդ փորձերը գիտութեան համար հետաքրքրութիւն չեն

ներկայացնում, և դիւ Պրէլ իրաւունք ունի ասելու, թէ «ինչպէս յայտնի է Բէյլենբախի 13000 փորձերը գրել են լուսնի բնակիչների համար»։

Սոյն տողերի ինքը հեղինակը Բարադիվկի փորձերի հաստատ լինելը գրատաւ. փորձելու համար մէկ ձեռքը մոտեցնելով՝ երևում էր թանձր ամպային մի նիւթ, իսկ միւս ձեռքը՝ խոշոր կէտեր, նման անձրևի ընկնող կաթիլներին։ (Մենք օգտուել ենք մօտ 3 րոպէի ընթացքում Ֆլէյշների թիթեղներով և Էյկոննօ-հիդրօխինոնի ցուցիչներով)։

Մենք չենք կարծում սակայն (որ շատ անգամ հաստատել են քնաշրջիկները), որ Բէյլենբախի լոյսը կենդանական մագնէտիսմի հետ համանման լինի։ «Հոգեկան Էտիւդների» 1895 թ. Սեպտեմբերի համարում մենք արդէն մի անգամ ասել ենք, որ մեդիումի հոսանքը թէ նիւթով և թէ գոյնով էապէս տարբերւում է մագնիսահարի հոսանքից։

Քնաշրջիկները հաստատում են, թէ կան կարմիր, դեղին, կապոյտ և այլն հոսանքներ, որ առաջ են բերում բոլորովին տարբեր ներգործութիւններ։ Նրանց խօսքով՝ մաքուր, բարձր բուժական մագնէտիսմը աչքի է ընկնում իր հրաշէկ ու կապտաւուն ճառագայթներով, մինչդեռ մեդիումի, ֆիզիքականի, թանձրացրածի (матеріализованнаго) հոսանքները նոյնպէս բոլորովին տարբեր են։ Մենք միայն այն ժամանակ գիտական արժանաւորութիւնով կիմանանք մարդու ընդունակութիւնները (մինչև այժմ մենք դեռ ևս խարխաբում ենք մթութեան հէջ), երբ լուսանկարի միջոցով կը կարողանանք պատկերացնել թիթեղի վրայ մագնիսական հոսանքի այնքան զանազանակերպ գոյները։

Տորմինի փորձերը Դիւասելդորֆում —մագնէտիսմի օգնութեամբ լոյսի գործողութիւններ փակ արկղներում, որոնց վրայ պահում են մատների ծայրերը—

ընդունած են «Լուսանկարչական կենդրոնական թերթի» մէջ (Կարլսրուէ, № 10, Մայիսի 15, 1896 թ.) անհամոզեցուցիչ՝ առանձին զօրութիւն արտադրելու, որովհետև հաստատում են, որ մարդու մարմնի հետ միահաւասար ջրի կաթիլ տուել է միևնոյն հետևանքը։ Բայց նշանակուած փորձը—լուսանկարչական գործիքը մեզնից հեռու էր $1^1/_2$ մետր—հէնց դրա համար էլ աւելի համոզեցուցիչ է երևում (որովհետև չի կարելի ընդունել որ մենք չոգենք այդ տաքով), որ սոյնանման հետևանք ձեռք է բերում մինչև անգամ $1^1/_2$ մէտր տարածութիւնից։

Մինչդեռ ֆրանսիական բժշկական „La médecine moderne“ ամսագիրը 1897 թ, Յունիս 2, համար 44-ի մէջ բովանդակում է հետևեալ հաղորդագրութիւնը. («Գերզդայնական աշխարհ» № 7 Յուլիս 1897). «Կենսաբանական ընկերութեան վերջին նիստին Գ. Գ. Լիւպս և Դաւիթ

տուին հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնը։ Նա ապացուցում է մատների ծայրերից և աչքի խոռոչներից կանոնաւոր դրութեան մէջ հոսող ճառագայթների գոյութիւնը։ Այդ ապացուցում է վերոյիշեալ հոսանքի լուսանկարչական թիթեղի վրայ արած ներգործութիւնով։ Ինչպէս երևում է նրանց զեկուցումից, նրանք գործադրել են նոր եղանակը, որը ցոյց էր տուել դեռ անցեալ տարի Գ. Գուստաւ Լը-Բոնը։ Այս եղանակը կայանում է նրանում, որ մատները, որոնց հոսանքը կամենում են ապացուցանել, ուղղակի կոխում են ջրախինոնի տաշտակի (վաննա) մէջ և նրանց կակղանը (МЯКОТЪ) մութ տեղում 15 րոպէի չափ պահում են ժահնուկ (բրոմ) արծաթի ժելատինի վրայ։

Այսպէս նրանց ցոյց տուած թիթեղներից մէկի վրայ երևում է մէկ երիտասարդ մարդու մատների ծայրերի պատկերը (ճկոյտի, ցուցամատի և միջամա-

տի՝ աջ ու ձախ)։ Ոչ թէ միայն մատների ծայրերի իսկական պատկերն է երևում, այլ և նրանցից դուրս եկած՝ ճիշտ հովհարի ձևով, հոսանքը։ Մէկ անկիւնում երևում է, ինչպէս վերնամաշկի բաժանուած մի կտորը լողալով տաշտակի մէջ, արձակել է ուղղաձիգ թելեր՝ խուրձի նման։ Մի ուրիշ թիթեղի վրայ կար պատկերը աջ և ձախ ճրկոյթների, որոնց բոլոր ծաւալից դուրս էին եկել ճառագայթներ։ Ինչ որ ամենից նշանաւորն է, այդ ճառագայթները զարձեալ միախառնուել էին միմեանց հետ կազմելով անաստոմոզներ (ներվացանց), բոլորովին այնպէս, ինչպէս մագնիսի երկու բեռները։ Այդ երևոյթները ճշտեցին շատ անգամ։

Ջեկուցանողներին պատկանող թիթեղների ժողովածուն նրանց առաջարկած նոր փաստերի համար կարող է կատարեալ ապացոյցի տեղ ծառայել։

Աչքի հոսանքները (այստեսակ թի-

թեղ էլ էր ցոյց հանուած) ստացել են շատ զգայուն թիթեղի վրայ ուշադրութիւնով և անընդհատ նայելով։ Ի հարկէ, սրանք մթութեան մէջ պահել են աւելի երկար (30 րոպէ)։

Այս նոր հետազօտութիւնները տալիս են ամուր հիմք մի ամբողջ կարգ հին, տարօրինակ երևոյթների, որ վաղուց յայտնի են ենթակայական զգացողութիւն անունով, բայց որոնց առարկայական էութիւնը դեռ ևս չէր կարող ապացուցած լինել։ Այսպիսով մագնիսական «հեղուկը», այսպէս ասած Բէյլենբախի «զգացմունքը» (օդ), Բարեդի «ներվային զօրութիւնը» գուցէ ստանան գիտական հաստատութիւն»։

Ընդհանրապէս մագնէտիսմը դեռ ևս չփոթում են հիպնոտիսմի հետ, թէև նրանք իրար հետ ոչ մի ընդհանուր կապ չունին։ Մագնէտիսմը *նիւթ է, հեղուկ զօրութիւն է*, որը՝ առկախ հիւանդի զգայնութիւնից, զգացում է ինչպէս

տաք հոսանք։ Հիւանդներին ոչինչ չեն ներշնչում ու չեն քնացնում, բացառութեամբ քնաշրջիկների. բայց վերջիններս այնքան հազւագիւտ են, որ չի կարելի նրանց հաշուի բերել։ Ըստ մեծի մասին մագնէտիսմը շուտով ամրացնում է ջղերը և անմաքրութիւնը դուրս հանելու զօրութիւն է հաղորդում անդամներին, որի պատճառով ախտանշանները (Սիմպտոմ) մի փոքր ուժեղանում են։ Սա առաջ է գալիս այն ջանքից, որը բնութիւնը մագնէտիսմի օգնութիւնով անում է դուրս հանելու ցաւաբեր պատճառը։ Կարելի է մագնէտիսմով համարեա բոլոր ցաւերից բուժելու դէպքեր ցոյց տալ, բայց մենք հակամիտ ենք բացառութիւն համարելու փունջաւոր ուռուցքները, միզաքարը, եղջրամաշկի վրայ եղած բծերը, աչքի սև ջուրը, վերջաւորութիւնների ատրոֆիան (թուլութիւնը), ողնաշարի ծուծանցքի նեղսնալը, քնածին հիւանդութիւնը և այն

բոլոր ցաւերը, որոնք զուգադիր են մարմնական պակասութեան հետ, նոյնպէս և վիրաբուժութեան, մանկաբարձութեան, ատամնաբուժութեան արուէստներին վերաբերեալ հիւանդութիւնները։

Վերջապէս կարելի է ասել, որ մագնէտիսմը բուժում է *ամեն հիւանդութիւն, բայց ոչ ամեն հիւանդի*, և մահւան դէմ դեղ չը կայ։ Կարող է պատահել, որ տանջւողները դիմեն անփորձ մագնիսահարի և փորձերը անյաջող անցնեն։ Դրանով հիւանդը սխալ մտքի մէջ է ընկնում, մինչդեռ բանը նրանումն է, որ անփորձ ու անկարող մագնիսահարը չի հասնում նպատակին այնտեղ, ուր ընդունակը ստանում է գեղեցիկ հետևանքներ. Որովհետև տարբեր մագնիսահարների մագնիսական զօրութիւնը չափազանց տարբեր է։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/II 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ